ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«19» սեպտեմբեր 2020թ.
No 133

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.03.2020 թվականի թիվ 4123947 ակտը և 31.03.2020 թվականի 0196-20 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ

ՀՀ վարչական դատարանում քննվում է թիվ ՎԴ/3307/05/20 վարչական գործն ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Արամայիս Մանուկյանի /ՀՎՀՀ 52170148/ ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 23.03.2020 թվականի թիվ 4123947 ակտը և ՀՀ ՊԵԿ նախագահի «Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման մասին» 31.03.2020 թվականի թիվ 0196-20 որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ:

Ակտի կայացման հիմքում դրվել է անհատ ձեռնարկատեր Արամայիս Մանուկյանի կողմից ՀՀ կառավարության 05.10.2017 թ. թիվ 1318-Ն որոշման թիվ 3 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման կանոնների 23-րդ կետի պահանջները խախտելու հանգամանքը: Խախտման փաստն արձանագրելուց հետո, մինչ 23.03.2020 թվականի թիվ 4123947 ակտի կայացումը՝ 05.03.2020 թվականին անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարվել են խախտումը վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ, այսինքն՝ նշված ամսաթվից սկսած տպագրվող բոլոր ՀԴՄ կտրոններում արտացոլված են ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը 25.01.2019 թ. թիվ 6/12 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահը 18.06.2020 թ. թիվ 101 որոշմամբ նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով անվավեր

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

են ճանաչել վիճարկվող ակտերը՝ նկատի ունենալով, որ ՀԴՄ մուտքագրված գումարներն արտացոլվել են Ընկերությունների ֆիսկալային հասույթում, ինչպես նաև գնումից հետո Ընկերությունների կողմից կատարվել են համապատասխան գործողություններ, ինչի արդյունքում տրամադրվող ՀԴՄ կտրոններում արտացոլվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր վավերապայմանները:

Հիմք ընդունելով նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործերով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ նախագահի 18.06.2020 թ. թիվ 101 որոշումը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել թիվ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.03.2020 թվականի թիվ 4123947 ակտը և ՀՀ ՊԵԿ նախագահի 31.03.2020 թվականի թիվ 0196-20 որոշումը:
2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատիրոջը իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am